# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 439-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**____________________2019 թվականի N _________- Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 439-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» թիվ 439-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-րդ կետով.

«9.1. Եթե ներկայացված հաղորդումը հանցագործության մասին չէ, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը եռօրյա ժամկետում հաղորդումը փաստաթղթային տարբերակով վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

**Հավելված**

**ՀՀ կառավարության 2019 թվականի-ի**

**N -Ն որոշման**

**«Հավելված N 1**

**ՀՀ կառավարության 2018 թվականի**

**ապրիլի 12-ի N 439-Ն որոշման**

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

## ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ

1. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը (այսուհետ՝ նաև միասնական էլեկտրոնային հարթակ) բաղկացած է հետևյալ բաժիններից՝ **«Գլխավոր էջ»**, **«Ազդարարել»**, **«Հարթակի մասին»**, **«Հարթակի օգտագործման ուղեցույց»**, **«Վիճակագրություն»**, **«Հարթակի միջոցով բացահայտված հանցագործություններ»**:
2. Միասնական էլեկտրոնային հարթակի **«Գլխավոր էջ»** բաժինը պարունակում է ընդհանուր տեղեկատվություն միասնական էլեկտրոնային հարթակի հիմնական նպատակի և միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով անանուն ազդարարում իրականացնելու դեպքում անանունության իրավական երաշխիքների վերաբերյալ, ինչպես նաև նախազգուշացում համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու անհրաժեշտության վերաբերյալ: Սույն կետում նշված բաժնի միջոցով միասնական էլեկտրոնային հարթակի այցելուները ծանուցվում են, որ համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) հնարավոր է ծածկագրել «ՏՈՌ» (TOR), «Օպերա» (Opera), «Օպերա Մինի» (Opera Mini) կամ այլ ցանցային դիտարկիչների (browser) միջոցով:
3. **«Ազդարարել»** բաժինը նախատեսված է միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով հանցագործության վերաբերյալ հաղորդում ներկայացնելու համար: Միասնական էլեկտրոնային հարթակի այցելուները սույն կետում նշված բաժնի միջոցով կարող են՝
    - ընտրել անանուն կամ տվյալներ ներկայացնելու միջոցով ազդարարման եղանակներից իրենց համար նախընտրելի տարբերակը.
    - լրացնել համապատասխան դաշտերում ընտրված

ազդարարման եղանակին համապատասխան տվյալները, ինչպես նաև ամրակցել հաղորդմանն առնչվող էլեկտրոնային նյութերը.
    - լրացված տվյալները ստուգելուց հետո հաստատել հաղորդումը՝ այն ներկայացնելով համակարգի հաղորդումների կառավարման մոդուլ:
4. Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով հաղորդում ներկայացնելիս լրացվում է հետևյալ հարցերը պարունակող հարցաշարը.
    - այն մարմինը, որտեղ կամ որի աշխատողի մասնակցությամբ, ըստ ազդարարի, կատարվել է հանցագործություն (պարտադիր).
    - հանցագործություն կատարած անձի անունը, ազգանունը, պաշտոնը (ոչ պարտադիր).
    - հանցագործությանն առնչություն ունեցող այլ անձի անունը, ազգանունը, պաշտոնը (ոչ պարտադիր).
    - հանցագործության կատարման ամսաթիվը, իսկ եթե դա հայտնի չէ, ապա այն ժամանակագրական միջակայքը, երբ տեղի է ունեցել հանցագործությունը (պարտադիր).
    - հանցագործության հետ կապված մանրամասները՝ նշելով, թե երբ և ինչ պայմաններում է կատարվել հանցագործությունը:

5. Միասնական էլեկտրոնային հարթակում հաղորդում ներկայացնելու դեպքում ազդարարը ծանուցվում է Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ հաղորդումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգելու պայմանների մասին:

6. Օգտատիրոջ վավերապայմաններով միասնական էլեկտրոնային հարթակ մուտք չգործած յուրաքանչյուր ազդարարի համար, հաղորդում ներկայացնելու պահին, համակարգն ինքնաշխատ եղանակով գեներացնում է օգտվողի անուն և գաղտնաբառ, որոնց միջոցով՝

- ազդարարը կարող է մուտք գործել համակարգում իր անձնական տիրույթ, հետևել ներկայացված հաղորդման ընթացքին և հետադարձ կապի միջոցով պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել հաղորդման հետագա ընթացքի համար պատասխանատու անձին,
- տվյալներ ներկայացնելու եղանակով հաղորդում ներկայացրած ազդարարը, մուտք գործելով միասնական էլեկտրոնային հարթակ, կարող է նաև այլ հաղորդումներ ներկայացնել իր անձնական տիրույթից:

7. **«Հարթակի մասին»**բաժինը պարունակում է տեղեկատվություն միասնական էլեկտրոնային հարթակի մասին, այդ թվում՝ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման նպատակը և ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

8. **«Հարթակի օգտագործման ուղեցույց»** բաժինը պարունակում է ուղեցույց, որտեղ քայլ առ քայլ նկարագրված են անանուն և տվյալներ ներկայացնելու եղանակով ազդարարման կարգերը, տարբեր տեսակի սարքերով և հենքերով միասնական էլեկտրոնային հարթակ մուտք գործելու դեպքում համացանցային հաղորդակարգի հասցեի (Internet Protocol Address) ծածկագրման առաջարկվող եղանակները, ինչպես նաև ներկայացված հաղորդման պարագայում հետադարձ կապի իրականացման առանձնահատկությունները:
9. **«Վիճակագրություն»** բաժնում ներկայացվում են վիճակագրական տվյալներ միասնական էլեկտրոնային հարթակի այցելությունների թվի, միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված հաղորդումների թվի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգված և չստուգված հաղորդումների տոկոսային հարաբերության, ինչպես նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգված հաղորդումների արդյունքում ընդունված՝ քրեական գործ հարուցելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների տոկոսային հարաբերության վերաբերյալ:
10. «**Հարթակի միջոցով բացահայտված հանցագործություններ»** բաժինը ներկայացնում է միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումների միջոցով բացահայտված հանցագործությունների մասին համառոտ տեղեկատվություն: